ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1321-Ա « 11 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի
Հ.308-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.308-Ա որոշման համաձայն՝ 87,548,991.01 (ութսունյոթ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր իննսունմեկ հազար դրամ մեկ լումա) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.308-Ա որոշման հավելվածում նշված կանգառասրահներն անհատույց օտարվել (նվիրվել) է «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությանը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.308-Ա որոշումը.

1.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել 64 հատ կանգառասրահների նվիրատվության պայմանագիր:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ